

սկսի ժպտիլ : Հօրը անուշը կը պապա-
լէ , կը սկսի իր չորս կողմը եղած այլ և
այլ բաները ճանչնալ , մանաւանդ անոնք
որ իրենց փայլուն գունովն ու հանած
ձայնովը զինքը աւելի կը զուարճացը-
նեն : Երբոր ջղերը այնչափ զօրանան որ
կարենայ ինքզինքը ոտքի վրայ բռնել,
ալ անդադար քալել կ'ուզէ , զգացողու-
թիւնը շատ սուր է , վրան եղած տպա-
ւորութիւնները դիւրաւ կ'անցնին , և
մտածմունքները անհաստատ են , կու
գան ու կ'երթան : Փոփոխամիտ է , կա-
մապաշտ , դիւրահաւան , անկեղծ , վախ
կոտ և հետաքրքիր : Պէտք չէ ամենեւին
այսպիսի հասակին մէջ տղուն ուղեղը
շատ աշխատցնել , վրան զի ան ատեն
մէկալ գործարանները լաւ չեն մեծնար :

Ինչուան արեւունքը գրեթէ աս է տը-
ղուն կեանքը . յօժարութիւնները , ա-
խորժակները նոյն են . միայն թէ կըր-
նայ անթիւ օգտակար տեղեկութիւն-
ներ սորվիլ : Բայց պատանեկութիւնը
նոր կեանք մը կը սկսի : Բայ տարիքին
մէջ կ'իրքերը ոտք կ'ելեն , ու պէտք
կ'ըլլայ որ անոնց հետ պատանին պատե-
րազմիլ սկսի : Բն ատենը տղայութեան
խաղերը իրենց համը կը կորսնցնեն .
որսորդութիւն , ձի հեծնալ և ուրիշ
կտրճութիւններ կ'ուզէ : Բնիկայ ան
տարիքն է որուն մէջ մարդ եւանդուն
կ'ըլլայ , անխոհեմ , դիւրախաբ , փոփո-
խամիտ , իր վրայ վստահ , քաջասիրտ ,
ձեռներէց և յանդուգն . մտացածին ե-
րեւակայութիւններու ատենն ալ աս է :

Երիտասարդութեան ժամանակը մարդս
բարեսիրտ , աշխոյժ , կրակոտ ու վեհ-
անձն կ'ըլլայ . միտքը արագ , զգացմուն-
քը ճիշդ , մտադրութիւնը զօրաւոր և
դատմունքը ուղիղ : Օգայարանքը ի-
րենց վերջի կատարելութեան հասած
ըլլալով , երկար ատեն կրնան աշխատիլ
առանց յոգնելու :

Երական հասակին մէջ մարդուս
հանձարը կը բացուի ու մեծամեծ խոր-
հուրդներ կը ծնանին մտքին մէջ . փա-
ռասիրութիւնը և միանգամայն մեծնա-
լու և հարստնալու փափաքը սրտին վը-
րայ կը տիրեն : Բայ հասակիս մէջ մար-

դուս դատմունքը հասուն կ'ըլլայ , կամ-
քը հաստատուն , զգացմունքը անփո-
փոխ , և աս կատարելութիւնները թէ
որ աղէկ կառավարուն , մեծամեծ
տաղանդներու ու առաքինութիւններու
գերազանց աղբիւր կ'ըլլան :

Բայց վրան շատ չանցնիր՝ ծերու-
թեան ձմեռը կը հասնի . ան ատեն
ամէն զգացմունքները կը տկարանան ,
աչքը կը մթննայ , ականջը կը ծանրա-
նայ , շօշափելիքը կը բթանայ , ճաշա-
կելիքն ու հոտոտելիքը գրեթէ բոլո-
րովին կը փճանան : Բնհասուն մար-
մնոյն զգացողութիւնը կ'երթայ , և ա-
մենէն աւելի յիշողութիւնը կը տկարա-
նայ , ու անկէջ ետեւ երկարատեւ քունի
պէս թմրութեան մը մէջ կը մնայ :
Ներքը ամենեւին երեւակայական բաներ
չունենար . գլխէն շատ ձախորդ բաներ
անցնելով՝ մարդկային չարութեանը
փորձ եղած է . ուստի մարդկանց վրայ
ամենեւին վստահութիւն չունենար , Բն
տուած միայն է իր յոյսն ու ապաւէնը .
շատ անգամ բարկասիրտ ու դժուարա-
հաճ կ'ըլլայ , տխուր , կասկածոտ , ա-
գահ , անդադար անցած ժամանակնե-
րը կը գովէ ու ներկան կը պարսաւէ :
Բն ծերութեան հասակը իրաւցնէ գե-
րեզման մըն է այն ամենայն գեղեցիկ
կատարելութեանց որ Բնտուած կու
տայ մարդուս :

Իր հակառակորդներուն յարգը կոտորոն ու ա-
նոնց աղէկութիւնը վար զարնողն ինքն իր յարգը կը
կոտրէ : Ազգաց իրարու դէմ ունեցած նախանձոր-
դութիւնները , երբոր իրարու աղէկութիւնները
ուրանալու և ատելու համար եղած ըլլան , անարգ
ու ամօթալի են : Բնհակառակն՝ աղիւ և օգտա-
կար են , երբոր օտարներուն մէջ եղած աղէկ բա-
ները ճանչնալու , գովելու և անոնց նմանելու
վրայ կը կայանան : Այս նախանձորդութիւններն
այն ատեն չեն ուրիշ չի քաշելու չար նախանձ մը ,
այլ բարի և գովելի նախանձաւորութիւն մը կ'ըլլայ
աղէկ բաներու մէջ իրար գերազանցելու : Ինչ
հարկ կայ փնտուելու թէ աղէկութիւն մը այս
աղբը ըրած է թէ մէկալ , բաւական է թէ աղէ-
կութիւն ըլլայ : Առաքինութիւնները հայրենիք
չունին , կամ մանաւանդ ամենուրեք ալ հայրենիքը
մի և նոյն է , այսինքն Եստուած է , որ զանոնք
կ'ազդէ , և մարդիկ՝ որ անոնցմէ օգուտ կը քաղեն :

ԼԱՄԱՐԴԻՆ